Ն Ո Ր Գ Ր Ք Ե Ր

Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ — «Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին», Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը՝ 3000, 260 էջ, գինը՝ 92 կոպ.։

Ներկա աշխատության մեջ հեղինակը հինգերորդ դարի պատմիչ Մովսես Խորենացու մոտ պահպանված հայ ժողովրդի պատմության հելլենիստական շրջանի վերաբերյալ կարևոր տեղեկությունների հիման վրա լուսաբանում է այդ աղբյուրների ակունքները, և Մովսես Խորենացու կողմից նրանց մշակման եղանակները։

Գիրքն ունի հավելված, ուր տպագրված են նոր մատենագրական նյութեր Արտաշես Ա-ի մասին, և հատուկ անունների ցանկ։

Հ. Մ. ԱՄԱԼՅԱՆ — «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ», Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը՝ 1000, 242 էջ, գինը՝ 83 կոպ.։

Աշխատության մեջ արծարծվում են հայ միջնադարյան բառարանագրության սկզբնավորման, զարգացման, տեսության ու բնույթի հիմնական հարցերը, բանասիրական ու լեզվաբանական քննության են ենթարկվում V—XV դարերի բառարանագրական հուշարձանները, ցույց է տրվում նրանց դերը միջնադարյան մշակույթի մեջ և արժեքը արդի հայագիտության, մասնավորապես հայ լեզվաբանության համար։

Է. Բ. ԱՂԱՅԱՆ — «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը», Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1967 թ., տպաքանակը՝ 4000, 404 էջ, գինը՝ 1 ռ. 54 կոպ.

Սույն ուսումնասիրությունը ժամանակակից հայերենի հոլովման ու խոնարհման համակարգի կառուցվածքային վերլուծության ու նկարագրության առաջին փորձն է։

Մենագրության մեջ հանգամանորեն նկարագրվում են հոլովման ու խոնարհման ձևերի կառուցվածքային առանձնահատկությունները և դրանց հիման վրա տրվում այդ ձևերի ընդհանուր մոդելները։